В отличие от ранее изученных тетрациклических азагетероциклов, среди которых был обнаружен ряд активных соединений, исследованные стирил производные пиридо[1,2-а]пиримидинов слабо угнетают дезаминирование серотонина моноаминоксидазой. Кроме того, в данном ряду не замечено усиление активности, связанное с электроотрицательностью заместителей в фенильной группе.

Таким образом, изучение антимонаминоксидазной активности некоторых новых замещенных пиримидинов и пиридо[1,2-а]пиримидинов показало, что исследованные соединения проявляют слабое ингибирующее действие в отношении моноаминоксидазы из мозга крыс *in vitro*.

ЛИТЕРАТУРА

1. Арутюнян А.А., Гаспарян Г.В., Сукасян Р.С., Григорян А.С. Новые сильные ингибиторы моноаминоксидазы–3-(2-циклопентил- и изобутилсульфанилэтил)пиридо-[1,2-а]пиримидины. Хим. ж. Армении, 69, 3, с. 362-365, 2016.

2. Арутюнян А. А., Паносян Г. А., Галстян М. В., Пароникян Р. В., Степанян Г. М., Сукасян Р.С., Григорян А.С. Синтез новых пиримидинов и поликонденсированных азаетероциклов. Сб. трудов "Некоторые успехи органической и фармацевтической химии". Ереван, НАН РА, вып. 2, с. 299-310, 2015.
3. Арутюнян А.А., Сукасян Р.С., Григорян А.С. МАО-ингибирующие свойства некоторых новых замещенных пиримидинов и конденсированных азаетероциклов. Биолог. журн. Армении, 68, 1, с. 60-63, 2016.
4. Новые достижения в терапии психических заболеваний / Под ред. проф. С.Н. Мосолова. М., ЗАО "Издательство Бином", 624 с., 2002.
5. Bruce T.J., Saeed S.A. Social anxiety disorder: a common, underrecognized mental disorder. Am. Fam. Physician, 60, 8, pp. 2311-2320, 1999.
6. Fiedorowicz J. G., Swartz K. L. . The role of monoamine oxidase inhibitors in current psychiatric practice. J. Psychiatr. Pract., 10, 4, pp. 239-248, 2004.
7. Geldenhuys W. J., Darvesh A. S., Funk M. O., Van der Schyf C. J., Carroll R. T. Identification of novel monoamine oxidase B inhibitors by structure-based virtual screening. Bioorg. Med. Chem. Lett., 20, 17, pp. 5295-5298, 2010.
8. Livingston M. G., Livingston H. M. Monoamine oxidase inhibitors. An update on drug interactions. Drug Safety, 14, 4, pp. 219-227, 1996.
9. Passarotti C., Resnati G., Doria G. Synthesis of new 2-(2-phenylethenyl)-4-oxo-4H-pyrido-[1,2-a]pyrimidine-7-carboxylic acids. Farmaco Ed. Sci., 39, 10, pp. 837-845, 1984.

Поступила 04.07.2018



Հայաստանի կենսաբ. հանդես, 4(70), 2018

**ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՆՆՂԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՈՐՈՇ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՄԲՈՆԻ ԵՎ ԿԱՇԵՆԻ ՄԵՏԱՂԱՅԱՆՔԵՐԻՆ
ԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ**

Տ.Ա. ԶՀԱՆԳԻՐՅԱՆ, Ս.Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
tjhangiryan@mail.ru

2011 թ. Գերմանական արտադրության X-500 XRF դրեյֆային դետեկտորի (անալիզատոր SDD) միջոցով որոշվել է մի շարք քիմիական տարրերի պարունակությունն Արցախի Հանրապետության Դրմբոնի և Կաշենի մետաղահանքերին կից տարածքներում աճող սննդային նշանակություն ունեցող տարբեր բուսատեսակներում: Պարզվել է, որ շահագործվող հանքերից, հանքահարստացման ֆաբրիկաներից և պղծամբարներից մոտ 300 մ և ավելի հեռավորության շառավղում մշակվող և բնական բույսերի մեջ ծանր մետաղների վտանգավոր կոնցենտրացիաներ չեն հայտնաբերվել, իսկ Hg-ը, Cd-ը և As-ը դրանցում առհասարակ բացակայել են:

Մետաղահանքեր – մշակովի և բնական բուսատեսակներ – ծանր մետաղների պարունակություն

Дрейфовым детектором X-500 XRF (анализатор SDD) немецкого производства 2011 г. определено содержание ряда химических элементов в некоторых видах растений, имеющих пищевое значение, произрастающих в приграничных территориях металлорудников Дрмбона и Кашена Республики Арцах. Было выявлено, что в радиусе 300 м и более от эксплуатируемых рудников, обогадительных фабрик и хвостохранилищ опасные концентрации тяжелых металлов в возделываемых и природных растениях не обнаружены, а Hg, Cd и As в них вообще отсутствовали.

Металлорудники – возделываемые и природные растительные виды – содержание тяжелых металлов

In 2011 the content of some chemical elements in different plants of nutritional significance growing in areas adjacent to metal ores of Drmbon and Kashen has been determined using the drift detector X-500 XRF (analyzer SDD). It has been revealed that in cultivated and natural crops growing at the distance of 300 m and more from the exploited mines, ore-processing factories and tailing dams, dangerous concentrations of heavy metals haven't been found and Hg, Cd and As were entirely absent.

Metal ores – cultivated and natural plants – content of heavy metals

Շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա բացասական մեծ ազդեցություն ունի հանքարդյունաբերությունը, որն առաջ է բերում բնական ռեյիեֆի խախտում, մթնոլորտի, ջրային օբյեկտների և հողերի աղտոտում, բուսածածկույթի ոչնչացում, տարածքի էկոլոգիական վիճակի վատթարացում և այլն:

Այդ ոլորտի ամբողջական տեխնոլոգիայի բոլոր օղակները՝ ապարային լցակույտերը, բաց և ընդերքային հանքերը, հանքահարստացման ֆաբրիկաները, պղնձ-ամբարները, հանքաքարի տեղափոխումը և այլն համարվում են ծանր մետաղների տարածման աղբյուրներ, որոնք ներկա ժամանակներում գնահատվում են որպես կենսոլորտի առավել վտանգավոր աղբյուրներ:

Բացօթյա հիդրոպոնիկայի և հողային պայմաններում կատարված համեմատական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աճեցված համեմունքային բույսերում (ռեհան, սամիթ, համեմ, ծիթրոն) ծանր մետաղների պարունակությունը ավելի բարձր է եղել հողում աճեցվածների մեջ, իսկ Pb-ի և Ni-ի քանակը երկու դեպքում էլ գերազանցում է ՍԹԿ-ն: Նույն պայմաններում աճեցված սրտիկունդը նույնպես ավելի քիչ ծանր մետաղներ է կուտակել հրաբխային խարամի և մանրախճի սուբստրատի հիդրոպոնիկայում, քան հողում [4, 8]:

ԱՅ-ում հանքարդյունաբերությունը սկսել է զարգանալ վերջին տարիներին և տարածքների վրա դրա էկոլոգիական ազդեցությունների վերաբերյալ գրեթե տվյալներ չկան: Այդ ուղղությամբ մեր կողմից 2014-2017 թթ.-ի ընթացքում ուսումնասիրություններ են կատարվել Դրմբոնի և Կաշենի մետաղահանքերին կից հողերի և ջրային օբյեկտների ծանր մետաղներով աղտոտվածության աստիճանը բացահայտելու ուղղությամբ, ինչպես նաև տրվել է դրանց էկոլոգիական վիճակի գնահատականը [4, 5, 8]:

Ծրագրային ներկա հետազոտությունների նպատակն էր ուսումնասիրել և գնահատել ԱՅ Դրմբոնի և Կաշենի մետաղահանքերին կից մշակովի հողատարածքներում աճող սևնդային նշանակություն ունեցող մշակաբույսերի և բնական բույսերի մեջ մի շարք ծանր մետաղների կուտակումը գործող օբյեկտներից տարբեր հեռավորությունների վրա, որտեղ հողերի ինտենսիվ մշակությունը գրեթե բացակայում է:

Նյութ և մեթոդ: Բույսերի նմուշառման կետերն ընտրվել են հանքավայրերից տարբեր հեռավորությունների վրա՝ հաշվի առնելով ռելիեֆի առանձնահատկությունները, քամիների ուղղությունը, հողատեսքերի նշանակությունը և բուսատեսակների օգտագործման ինտենսիվությունը: Անհրաժեշտ է նշել, որ հանքավայրերին կից տարածքների մեծ մասը չի մշակվում և ծառայում է որպես աղբատ արտավայր:

Բուսական նմուշներում ծանր մետաղների ընդհանուր պարունակությունը, ինչպես նաև կենսածին նշանակության մակրոտարրերը որոշվել են Ստեփանակերտի կենտրոնական երկրաբանական անալիտիկ լաբորատորիայում 2011 թ. Գերմանական արտադրության X-500 XRF դրեյֆային դետեկտորով (անալիզատոր SDD): Սարքը անալիզի իրականացման ռեժիմում (P 4000 E) օգտագործում է ալգորիթմ, որը հնարավորություն է տալիս լեռնաերկրաբանական (ինչպիսիք են հողերը, պղնձները, հարստացված թափոնները), ինչպես նաև բույսերի նմուշներում որոշել հնարավոր հայտնաբերվող տարրերը, մինչև 100 000 ppm – 10 % կոնցենտրացիաների դեպքում: Այսինքն, 1 000 000-ի մեջ 10 %-ից բարձր պարունակությունը չի որոշվում: Ստանդարտ նմուշը ներառում է K, Ca, S, P, Li, Fe, Ti, V, Cr, J, Mn, Co, Ni, Cu, Zn, W, Hg, As, Pb, Bi, Se, Th, Rb, U, Sr, Zr, Mo, Ag, Cd, Sn, Sb:

Աղբյուրներ և քննարկում: Բուսական նմուշներում բոլոր տարրերը որոշվել են օդաչոր վիճակում, ընդ որում կենսածին նշանակության մակրոտարրերը սարքի կողմից տրվում է տոկոսներով, իսկ ծանր մետաղները գ/տ-ով կամ մգ/կգ-ով (աղ. 1, աղ. 2):

Աղ. 1-ի տվյալներից երևում է, որ ծծմբի առավել բարձր պարունակություն է հայտնաբերվել ավելուկի և վարունգի նմուշներում, այն դեպքում, երբ Cl-ի պարունակությունն ուսումնասիրված նմուշներում որևէ օրինաչափության չի ենթարկվում՝ կապված օբյեկտի հեռավորության հետ:

Ուսումնասիրված բուսական նմուշներում հայտնաբերվել է կալիումի բարձր պարունակություն: Ավելուկի մեջ այդ տարրի պարունակությունը ճանկաթաղ գյուղի շրջակայքում կազմել է 6,21 %, իսկ Դրմբոնից մոտ 5 կմ հեռավորության վրա՝ >10 %: Երկու հանքավայրերից մոտ 300 մ հեռավորության վրա մշակվող վարունգի մեջ նույնպես հայտնաբերվել է K-ի բարձր պարունակություն (8,22 և 7,65 %): Կալիումը, ինչպես նաև P-ը, բույսերի մեջ հիմնական մոխրային տարրերն են: Մի շարք բույսերի մոխրում K-ի պարունակությունը տատանվում է 30-60 % [3]: Կալցիումի առավել բարձր պարունակություն է հայտնաբերվել ավելուկի, անասնակերի և դդումի մեջ, իսկ երկաթի պարունակությունը գրեթե բոլոր բուսական նմուշներում ցածր է եղել, որը միանգամայն օրինաչափ է:

Աղյուսակ 1. Կենսածին տարրերի պարունակությունը Դրմբոնի և Կաշենի մետաղային հանքավայրերի շրջակայքում աճող սննդային նշանակություն ունեցող որոշ բույսերում, նմուշառումը 2018 թ. (օդաչոր զանգվածի հաշվով)

Հանքավայր	Բույսը և նմուշառման կետը	%					
		S	Cl	K	P	Ca	Fe
1	2	3	4	5	6	7	8
Դրմբոն	1. Ավելուկ, Դրմբոն գյուղից մոտ 5 կմ դեպի հարավ	0,83	0,20	>10	0,42	1,86	0,14
	2. Վարունգ, Դրմբոն գյուղ, հանքից 300 մ հեռու	0,56	0,35	8,22	0,66	0,60	0,02
	3. Լոլիկ, Դրմբոն գյուղ, հանքից 300 մ հեռու	0,26	0,14	3,38	0,42	0,09	0,02
	4. Լոբի կանաչ, Դրմբոն գյուղ, հանքից 300 մ հեռու	0,33	0,06	2,93	0,40	0,07	0,01
	5. Կարտոֆիլ, Դրմբոն գյուղ, հանքից 300 մ հեռու դեպի հարավ	0,21	0,10	3,30	0,16	0,13	0,04
	6. Արոտ-անասնակեր, Դրմբոն գյուղ, հանքից 300 մ հեռու	0,45	0,40	2,86	0,68	1,98	0,06
Կաշեն	7. Արոտ-անասնակեր, հանքից 5 կմ դեպի արևելք	0,31	0,20	1,93	0,76	1,37	0,18
	8. Դդում, ճանկաթաղ գյուղ, հանքից 300 մ հեռու	0,18	0,22	4,21	0,39	1,09	0,009
	9. Տաթեղ, ճանկաթաղ գյուղ, հանքից 300 մ հեռու	0,49	0,48	6,03	0,32	0,65	0,015
	10. Վարունգ, ճանկաթաղ գյուղ, հանքից 300 մ հեռու	0,55	0,52	7,65	0,46	0,75	0,016
	11. Լոլիկ, ճանկաթաղ գյուղ, հանքից 300 մ հեռու	0,19	0,23	3,31	0,41	0,16	0,009
	12. Լոբի կանաչ, ճանկաթաղ, հանքից 300 մ հեռու	0,22	0,05	1,77	0,38	0,30	0,009
	13. Մոշ (հատապտուղ), ճանկաթաղ գյուղի շրջակայք	0,10	0,04	1,23	0,58	0,14	0,02
	14. Ավելուկ, ճանկաթաղ գյուղի շրջակայք	0,64	0,58	6,21	0,35	1,44	0,05

Աղ. 2-ում բերված բուսական գրեթե բոլոր նմուշներում հայտնաբերվել են Mn-ի, Cu-ի, Zn-ի, Rb-ի, Sr-ի, Pb-ի, Mo-ի տարրեր քանակություններ: Մանգանի համեմատաբար բարձր քանակություն է հայտնաբերվել ավելուկի (82 և 60 մգ/կգ) և անասնակերի մեջ (50 և 124 մգ/կգ): Մնացած բուսատեսակներում այդ տարրի պարունակությունը տատանվում է 16-ից (լոլիկ) մինչև 34 (մոշ, վարունգ) մգ/կգ: Ըստ որոշ ուսումնասիրությունների Լոռու մարզում աճող մոշի պտուղներում ավելի շատ սելեն (Se) է հայտնաբերվել, քան Mn և Zn [1]:

Մեր հետազոտություններում Se-ը, Cr-ը և Ba-ը (4,3; 8,3 և 24 մգ/կգ) հայտնաբերվել են միայն անասնակերում Կաշենի հանքավայրից մոտ 5 կմ հեռավորության վրա արոտում: Ba է հայտնաբերվել նաև Դրմբոնի հանքավայրից 5 կմ հեռավորության վրա աճող ավելուկում (21 մգ/կգ): Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրված ոչ մի նմուշում չի հայտնաբերվել Ni, Cd, Hg և Zr, իսկ յոդը հայտնաբերվել է միայն ավելուկի և անասնակերի մեջ:

Ուսումնասիրված ծանր մետաղներից Cu-ի, Zn-ի, Rb-ի, Sr-ի, Pb-ի առավել բարձր քանակություններ են հայտնաբերվել անասնակերի, ավելուկի, տաթեղի մեջ: Pb չի հայտնաբերվել կանաչ լոբու և Դրմբոնի տարածքում մշակվող վարունգի մեջ, Mo չի հայտնաբերվել ավելուկի, մոշի և կարտոֆիլի մեջ, իսկ ամենաշատն արձանագրվել է կանաչ լոբու, անասնակերի, տաթեղի և դդումի մեջ: Ինչ վերաբերվում է տիտանին, ապա նրա յուրացումը տարբեր տեղերում աճող նույն բուսատեսակի կողմից միանշանակ չէ: Օրինակ, Դրմբոնից մոտ 5 կմ հեռավորության վրա աճող ավելու կի մեջ հայտնաբերվել է 97 մգ/կգ Ti, իսկ ճանկաթաղի շրջակայքում չի հայտնաբերվել, նույնը վերաբերում է նաև անասնակերին և լոլիկին: Այդ տարրերից համապատասխանաբար 35 և 22 մգ/կգ քանակություն է հայտնաբերվել կարտոֆիլի և մոշի մեջ:

Աղյուսակ 2. Մի շարք ծանր մետաղների պարունակությունը Դրմբոնի և Կաշենի մետաղային հանքավայրերի շրջակայքում աճող սննդային նշանակություն ունեցող որոշ բույսերում, նմուշառումը 2018 թ. (օդաչոր զանգվածի հաշվով)

Հանքավայր	Բույսը և նմուշառման կետը	գ/տ կամ մգ/կգ								
		Ti	Mn	J	Cu	Zn	Rb	Sr	Pb	Mo
1	2	3	4	5	6	7	8	9		10
Դրմբոն	1. Ավելուկ, Դրմբոն գյուղից մոտ 5 կմ դեպի հարավ	97	82	224	18	41	42	100	9	-
	2. Վարունգ, Դրմբոն գյուղ, հանքից 300 մ հեռու	-	27	-	13	58	13	44	-	6
	3. Լոլիկ, Դրմբոն գյուղ, հանքից 300 մ հեռու	22	16	-	11	34	11	12	8	5
	4. Լոբի կանաչ, Դրմբոն գյուղ, հանքից 300 մ հեռու	-	19	-	15	72	11	-	-	14
	5. Կարտոֆիլ, Դրմբոն գյուղ, հանքից 300 մ հեռու դեպի հարավ	35	18	-	11	31	13	14	8	-
	6. Արոտ-անասնակեր, Դրմբոն գյուղ, հանքից 300 մ հեռու	-	50	146	34	84	20	129	12	5
Կաշեն	7. Արոտ-անասնակեր, հանքից 5 կմ դեպի արևելք	75	124	126	37	63	19	196	15	10
	8. Դդում, ճանկաթաղ գյուղ, հանքից 300 մ հեռու	-	17	-	21	31	10	170	6	8
	9. Տաթեղ, ճանկաթաղ գյուղ, հանքից 300 մ հեռու	-	23	-	15	29	13	92	8	8
	10. Վարունգ, ճանկաթաղ գյուղ, հանքից 300 մ հեռու	-	34	-	16	43	14	91	8	9
	11. Լոլիկ, ճանկաթաղ գյուղ, հանքից 300 մ հեռու	-	20	-	14	22	12	16	7	-
	12. Լոբի կանաչ, ճանկաթաղ, հանքից 300 մ հեռու	-	22	-	17	43	8	33	-	3
	13. Մոշ (հատապտուղ), ճանկաթաղ գյուղի շրջակայք	22	34	-	27	17	9	38	8	-
	14. Ավելուկ, ճանկաթաղ գյուղի շրջակայք	-	60	122	16	60	14	124	10	-

Ծանոթություն՝ Տ-տարրը չի հայտնաբերվել

Աղ. 2-ում բերված ծանր մետաղների պարունակության Էկոլոգիական գնահատումը անմիջականորեն կապված է տարբեր բուսատեսակներում դրանց ՍԹԿ-ի արժեքի հետ: Սակայն այս ուղղությամբ առանձին բուսատեսակների համար Էկոլոգիատոքսիկոլոգիական նորմատիվներ դեռևս չկան, քանի որ բուսատեսակների կողմից ծանր մետաղների կուտակումը պայմանավորված է տվյալ տարածաշրջանում հողերի աղտոտվածության աստիճանով:

Աղյուսակ 3. Բանջարեղենում և մրգում ծանր մետաղների ՍԹԿ- ները (մգ/կգ) [7]

Տեսակ	Hg	Cd	As	Pb	Ni	Cu	Zn
Բանջարեղեն	0,02	0,03	0,2	0,5	0,5	10	10
Միրգ	0,01	0,03	0,2	0,4	0,5	10	10

Համեմատելով ուսումնասիրության արդյունքում ստացված Pb, Cu, Zn տարրերի արժեքները աղ. 3-ում տրված ՍԹԿ-ների արժեքների հետ, տեսնում ենք, որ ունենք ՍԹԿ-ի արժեքի նկատմամբ գերազանցում: Կապարը համարվում է քաղցկեղածին և բնածին արատներ առաջացնող տարր: Տարիքի հետ կապարի պարունակությունը օրգանիզմում աճում է: Ցինկ և պղինձ տարրերը հանդիսանում են մարդու օրգանիզմի նորմալ գործունեության համար անհրաժեշտ միկրոտարրեր, սակայն այդ մետաղների գերնորմատիվ պարունակությունը սննդի մեջ հանգեցնում է օրգանիզմների գործառույթների, այդ թվում նաև վերարտադրության և ժառանգականության խախտմանը [2, 6]:

Պետք է նշել նաև, որ աղյուսակում բերված ծանր մետաղների պարունակություններն առկա են բույսերի օդաչոր զանգվածում, ապա կարելի է վստահորեն ասել, որ դրանք Էկոլոգիական տեսակետից այնքան վտանգավոր չեն մարդու համար, քանի որ բույսերի թարմ զանգվածի 70-90 %-ը կազմում է ջուր, այսինքն թարմ զանգվածում դրանց կոնցենտրացիաները նոսր են: Իսկ ինչ վերաբերում է ավելուկին, որը կուտակում է որոշ չափով Cu և Zn (16 և 60 մգ/կգ), օգտագործվում է չորացնելուց հետո, օգտագործելուց առաջ լվացվում է և ենթարկվում ջերմային մշակման: Այս եղանակով հեռացվում է ծանր մետաղների մինչև 70 %-ը: Այսինքն, ավելուկի օգտագործումը, որպես սննդամթերք Էկոլոգիական վտանգ չի ներկայացնում մարդու առողջության համար:

Ելնելով կատարված ուսումնասիրություններից՝ մարդու առողջության համար ռիսկերի նվազեցման նպատակով, առհասարակ վտանգավոր մթերք օգտագործելիս, պետք է պահպանել հետևյալ կանոնները. բանջարեղենի, մրգի, կանաչու պարտադիր լվացում հոսող ջրով, ջերմային մշակման ենթարկում, որի ընթացքում տեղի է ունենում թունավոր տարրերի հեռացում: Հետևաբար նպատակահարմար է մթերքն օգտագործել խաշած կամ խորոված վիճակում, իսկ մրգերը՝ պահածոյացված: Հատկապես խորհուրդ է տրվում խուսափել բանջարեղենի, մրգերի չորացումից, քանի որ տեղի է ունենում թունավոր նյութերի կուտակում վերջնական մթերքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եղոյան Ռ.Հ., Եղոյան Տ.Վ., Հովսեփյան Տ.Ս., Աստոյան Դ.Ա. Ծանր մետաղներից Se, Ma, Mg, Zn-ի քանակի և գաղթի ուսումնասիրությունը վայրի մոշենու տարբեր օրգաններում և աճելատեղի հողում, Ագրոգիություն, Երևան, 1-2, էջ 37-40, 2013:
2. Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի հանրապետությունում, Երևան, էջ 50-56, 2016:
3. Агрохимия под ред. Б.А. Ягодина, М., “Колос”, с. 29-34, 1982.
4. Джангирян Т.А., Арутюнян С.С. Эколого-токсикологическая оценка вод, прилегающих к металлдобывающим месторождениям Дрмбона и Вардадзора НКР (первое сообщение). Биолог. журн. Армении. Ереван, 68, 3. с. 59-66, 2016.
5. Джангирян Т.А. Эколого-токсикологическая оценка вод Сарсангского водохранилища и подземных вод Вардадзора Республики Арцах (РА) (второе сообщение). Биолог. журн. Армении. Ереван, 69, 2. с. 34-40, 2017.
6. Черников В.А., Соколов О.А. Экологически безопасная продукция, М., Колос, с. 292-314, 2009.
7. Dueck T.A. Heavy metal emission and genetic constitution of plant populations in the vicinity of two metal emission sources. Angew. Bot., 58, 1, p. 47-53, 1984.
8. Harutyunyan S.S., Jhangiryan T.A. Evaluation of ecological- toxicological state of soils around Drmbon and vardadzor metal oreas in the republic of Mountainouns Karabagh. Bulletin of NAUA, Yerevan, 1, p. 8-13, 2015.

Ստացվել է 29.08.2018



Հայաստանի կենսաբ. հանդես, 4(70), 2018

PARACHLORELLA KESSLERI ԿԱՆԱԶ ՄԻԱԲԶԻՋ ԶԻՆՍՈՒՄԻ ՈՐՈՇ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ

Ն.Ք. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն,
Այլընտրանքային էներգիայի աղբյուրների լաբորատորիա
narine_kalantaryan@yahoo.com

Ինտենսիվ կուլտիվացման պայմաններում ստացվել են *Parachlorella kessleri* կանաչ միաբջջի ջրիմուռի կենսազանգվածի նշանակալի քանակներ: Ուսումնասիրվել է ստացված կենսազանգվածի բիոմիական բաղադրությունը: Կելդալի մոդիֆիկացված մեթոդով որոշվել է սպիտակուցների ընդհանուր քանակությունը, այն կազմել է չոր քաշի 43,3 %:

ԳԶ անալիզի եղանակով ուսումնասիրվել է ճարպաթթուների որակական և քանակական բաղադրությունը: Ցույց է տրվել, որ միկրոջրիմուռի կենսազանգվածն ըստ չոր քաշի պարունակում է 6,8 % ճարպաթթուներ, որոնցից 26,6 %-ը հագեցած ճարպաթթուներ են, 59,9 %-ը՝ չհագեցած, իսկ 5,0 %-ը՝ անհայտ ճարպաթթուներ: ԲԱՀԶ անալիզի եղանակով որոշվել է ածխաջրերի ընդհանուր քանակությունը. 32,04 %՝ չոր քաշի հաշվով: Իրականացվել է դրանց նույնականացում, որոշվել են հիմնական բազմաշաքարների քանակները, այդ թվում՝ 23,0 % գլյուկան, 30,0 % արաբինան, 24,0 % քսիլան և 23,0 % լիգնին:

Սպեկտրոֆոտոմետրիկ եղանակով որոշվել է բլորոֆիլ *a*-ի և *b*-ի պարունակությունը՝ համապատասխանաբար՝ 12,7 և 5,7 մգ/գ՝ չոր քաշի հաշվով:

Միկրոջրիմուռ – *Parachlorella kessleri* – ֆիզիկաքիմիական անալիզ

В условиях интенсивного культивирования получены значительные количества биомассы зеленой одноклеточной микроводоросли *Parachlorella kessleri*. Был исследован химический состав полученной биомассы. Модифицированным методом Кельдаля определено общее количество белка – 43,3 % на сухой вес.

Методом ГХ-анализа изучен качественный и количественный состав жирных кислот. Показано, что сухая биомасса микроводоросли содержит 6,8 % жирных кислот на сухой вес, в том числе насыщенных – 26,6 %, ненасыщенных – 59,9 %, не идентифицированных – 5,0 %. Методом ВЭЖХ-анализа определено общее количество углеводов – 32,0 % на сухой вес. Выполнена их идентификация, определены количества основных полисахаридов, включая глюкан – 23,0 %, арабинан – 30,0 %, ксилан – 24,0 % и лигнин – 23,0 %.

Спектрофотометрическим методом определено содержание хлорофилла *a* и *b*, соответственно 12,7 и 5,7 мг/г биомассы на сухой вес.

Микроводоросли – *Parachlorella kessleri* – биомасса – физико-химический анализ

Significant amount of biomass of the green unicellular microalgae *Parachlorella kessleri* under conditions of intensive cultivation were obtained. The chemical composition of the obtained biomass was investigated. The total protein amount (43,3% in dry weight) was determined by the modified Kjeldahl method.

The qualitative and quantitative composition of fatty acids was studied by the method of GC-analysis. The results have shown that the dry biomass of microalgae contains 6.8 % of fatty acids in dry weight, including saturated – 26,6 %, non-saturated – 59,9 % and non-identified – 5,0 %. The total amount of carbohydrates (32,04 % in dry weight) was determined by HPLC analysis.

They were identified, the amount of basic polysaccharides were determined, including glucans – 23,0 %, arabinan – 30,0 %, xylan – 24,0 %, and lignin – 23,0 %.

The content of chlorophyll *a* and *b* was determined spectrophotometrically and composed 12,7 and 5,7 mg/g dry biomass, respectively.

Microalgae – *Parachlorella kessleri* – biomass – physical and chemical analysis

Միկրոջրիմուռների կենսազանգվածի քիմիական բաղադրությունը թույլ է տալիս օգտագործել դրանք մի շարք արժեքավոր, առևտրային տեսանկյունից կարևոր նյութերի՝ սպիտակուցների, ածխաջրերի, լիպիդների, վիտամինների, հակաօքսիդանտների, ամինաթթուների, միկրո- և մակրոէլեմենտների կենսաբանորեն մատչելի ձևերի, ինչպես նաև կենսազագի, ջրածնի, կենսաէթանոլի, կենսադիզելի, պոլիչիազեցած ճարպաթթուների և այլ նյութերի ստացման համար [2; 6; 10; 11; 18]: Միկրոջրիմուռների կուլտիվացման պայմանները փոփոխելով, կարելի է ստանալ կենսաբանորեն ակտիվ նյութերի տրված պարունակությամբ կենսազանգված [3]: Ընդ որում, բավականին արդիական է հանդիսանում բջիջների կենսազանգվածի կուտակման և դրանց կենսաօրգանական բաղադրության վրա ազդող արհեստիկ գործոնների խիստ պահպանումը (կուլտիվացման ջերմաստիճան, լուսավորության ինտենսիվություն, սննդամիջավայրի բաղադրություն և այլն): Այսպես, Converti-ի *et al.*, 2009 կարծիքով կուլտիվացման ջերմաստիճանի նվազեցնելը 30⁰-ից մինչև 25⁰C և սննդամիջավայրի մեջ 0,75 գ/լ նատրիումի նիտրատի ավելացնելը գործնականում չի ազդում *Chlorella vulgaris* միկրոջրիմուռի բջիջների աճի արագության վրա, սակայն բերում է լիպիդների ելքի ավելացման՝ օրական 8 մգ/լ-ից մինչև 20 մգ/լ [8]: Ավանառ է, որ կենսազանգվածի բաղադրության մեջ լիպիդների պարունակության ավելացումը բերելու է այլ կենսաօրգանական միացությունների մասնաբաժնի փոփոխման: Այսպիսով, ֆոտոկենսառեակտորներում միկրոջրիմուռների նպատակաուղղված աճեցման դեպքում կարելի է հասնել ցանկալի կենսաքիմիական բաղադրությամբ բջիջների ուղղորդված ստացման:

Միկրոջրիմուռների արագ աճող արտադրիչ շտամների ընտրությունն ունի սկզբունքային նշանակություն՝ կենսազանգվածից ցածր ինքնարժեքով նյութերի ստացման առումով: Բացի դրանից, միկրոջրիմուռների արտադրական կուլտիվացման պայմաններում աճի արագ տեմպերը նվազեցնում են մանրէաբանական աղտոտվածության վտանգը:

Chlorellaceae ընտանիքի միկրոջրիմուռները, որոնք բնակվում են գլխավորապես բնական քաղցրահամ ջրերում, համարվում են առավել արտադրողական տեսակներ [16]: Սա միկրոջրիմուռների ընտանիք է, որը ներկայացված է լայնորեն հայտնի և մանրամասն ուսումնասիրված *Chlorella*, *Parachlorella*, *Nannochloris* և այլ ցեղերով [17], ինչն անկասկած առավելություն է արդյունաբերության մեջ դրանց կիրառման տեսանկյունից: Կենսազանգվածի բարձր արտադրողականության հետ մեկտեղ, այդ բջիջները, շնորհիվ մետաբոլիզմի յուրահատկությունների, օժտված են բացառիկ հարմարվողականությամբ շրջակա միջավայրի պայմանների փոփոխման նկատմամբ [23], որոնք թույլ են տալիս յուրացնել ածխածնի ոչ միայն անօրգանական, այլև օրգանական աղբյուրները [13]:

Ավանդաբար միկրոջրիմուռների կենսազանգվածը հումք է հանդիսանում կերային սպիտակուցների ստացման համար [20]: Վերջին ժամանակներս միկրոջրիմուռների կենսազանգվածի կենսաքիմիական բաղադրության վրա կուլտիվացման պայմանների ազդեցության մասին գիտական պատկերացումների զարգացման հետ մեկտեղ ինտենսիվ ներդրվում են նախագծեր՝ ուղղված միկրոջրիմուռների բաղադրության մեջ մտնող լիպիդների փոխակերպմանը կենսադիզելի [15]: Այնուամենայնիվ, ներկայումս, նույնիսկ հաշվի առնելով նավթի գների էական տատանումները, բավականին դժվար է հասնել միկրոջրիմուռներից ստացվող կենսադառնիքի ինքնարժեքի այնպիսի ցուցանիշների, ինչպիսիք են նավթային հումքից ստացվող համանման նյութերի գները: Այս կապակցությամբ արդիական է հանդիսանում միկրոջրիմուռների բաղադրության մեջ մտնող կենսաբանական մակրոմոլեկուլների փոխարկումը առևտրային տեսանկյունից կարևոր, բարձրարժեք նյութերի (ամինաթթուներ, հազեցած և չհազեցած ճարպաթթուներ, մի շարք օրգանական թթուներ, կարոտինոիդային պիգմենտներ, վիտամիններ և այլն):

Հետազոտության նպատակն է հանդիսանում բաղադրահամ ջրերից առանձնացված և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի այլընտրանքային էներգիայի աղբյուրների լաբորատորիայի միկրոջրիմուռների հավաքածուում պահպանվող *Parachlorella kessleri* միկրոջրիմուռի արտադրական առանձնահատկությունների ուսումնասիրությունը և գնահատումը:

Նյութ և մեթոդ: Հետազոտության օբյեկտ է հանդիսացել կանաչ միաբջջի ջրիմուռ *Parachlorella kessleri*-ն, որն անջատվել և մոլեկուլային-գենետիկական մեթոդներով նույնականացվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի այլընտրանքային էներգիայի աղբյուրների լաբորատորիայում:

Միկրոջրիմուռը կուլտիվացվել է 80 լիտրանոց կենսառեակտորում՝ 24⁰-26⁰C ջերմաստիճանի, 2000 լյուքս շուրջօրյա լուսավորության պայմաններում (Phillips LED 19W/865 լամպեր, Նիդեռլանդներ): Կուլտուրալ հեղուկի խառնուրդն իրականացվել է սեղմված օդի միջոցով (108 լ·ժ⁻¹·լ⁻¹): Կուլտիվացիան իրականացվել է Տափայի մոդիֆիկացված հեղուկ սննդամիջավայրում [5; 22; 1]:

Միկրոջրիմուռի աճը գնահատվել է սպեկտրոֆոտոմետրիկ չափումներով՝ 540նմ ալիքի երկարության տակ (HITACHI U-2000, Ճապոնիա): Որպես ստուգիչ օգտագործվել է թորած ջուր: Աճի գործակիցը (μ , օր⁻¹) լոգարիթմական փուլում հաշվարկվել է համաձայն հետևյալ բանաձևի.

$$\mu = (\ln N/N_0)/t,$$

որտեղ N-ը կենսազանգվածն է t ժամանակում, իսկ N₀-ն՝ կենսազանգվածի բանակությունն է կուլտիվացիան սկսելիս:

Կուլտուրալ հեղուկի նմուշների pH-ը ևս ամեն օր չափվել է pH-մետրով (InoLab WTW, Գերմանիա):

P. kessleri միկրոջրիմուռի աճը գնահատվել է նաև չոր կենսազանգվածի որոշմամբ: Դրա համար հայտնի օպտիկական խտությամբ 12 մլ կուլտուրալ հեղուկը ֆիլտրվել է նախապես կշռված ապակե միկրոֆիբրիլային ֆիլտրերի միջոցով (Whatman, MFV-3, 47 մմ, անցքերի չափը՝ 1,2 մմ): Ֆիլտրերը կրկին կշռվել են 80⁰C-ի պայմաններում 24 ժ չորացնելուց և էքսիկատորում վակուումի պայմաններում սառեցնելուց հետո: Ստացված տվյալներն ընդհանրացվել են և կազմվել է օպտիկական խտություն-չոր կենսազանգված հարաբերությունը:

Կուլտուրալ հեղուկից միկրոջրիմուռի կենսազանգվածի անջատման համար կիրառվել են հետևյալ եղանակները. սեղիմենտացիա և ցենտրիֆուգում՝ 10000 պտ./րոպե արագությամբ, 15 րոպե, 4⁰C-ի պայմաններում (Heraeus multifuge 3SR+ centrifuge, Thermo Scientific, ԱՄՆ): Ցենտրիֆուգված խոնավ կենսազանգվածը չորացվել է լիոֆիլ չորացման սարքով (Labconco, ԱՄՆ): Չոր կենսազանգվածում խոնավության պարունակությունը որոշվել է համաձայն NREL (National Renewable Energy Laboratory) լաբորատոր անալիտիկ ցուցումների [21]:

Միկրոջրիմուռի կենսազանգվածում սպիտակուցի պարունակությունը որոշվել է մոդիֆիկացված Կելդալի մեթոդով [4]: Սպիտակուցի պարունակությունը որոշելու համար ստացված «Կելդալի ազոտի» պարունակությունը բազմապատկվել է 5.95 կոնվերտացման գործակցով [14]: Հաշվարկները կատարվել են համաձայն հետևյալ բանաձևերի.

$$\%N = \frac{(V - V_0) \cdot F \cdot c \cdot M(N)}{m \cdot 1000} \cdot 100\%$$

$$\%P = \%N \cdot PF,$$

որտեղ V-ն ծախսված տիտրանտի ծավալն է մլ-երով, V₀-ն ստանդարտի տիտրման համար ծախսված տիտրանտի ծավալն է (միջին արժեք), F-ը մոլյար ռեակցիոն ֆակտորն է (1=HCl, 2=H₂SO₄), c-ն տիտրանտի կոնցենտրացիան է (մոլ/լ), M(N)-ը ազոտի մոլեկուլային զանգվածն է՝ 14,007 գ/մոլ, m-ը նմուշի զանգվածն է (գ), 1000 մլ-ը լիտրի վերածելու կոնվերտացման գործակիցն է, PF-ը կոնվերտացման գործակիցն է կոնկրետ նմուշի համար՝ 5,95, %N-ն սպիտակուցային ազոտի տոկոսային պարունակությունն է, % P-ն սպիտակուցի տոկոսային պարունակությունն է նմուշում:

Կենսազանգվածում կառուցվածքային բազմաաբաբների և լիզինի որոշումն իրականացվել է NREL/TP-510-42618-ի համաձայն [19]: Կատարվել է նոսրացված թթվային հիդրոլիզ: Հեղուկ ֆազն անալիզի է ենթարկվել Agilent 1100 Series, Գերմանիա բարձրարդյունավետ հեղուկային բրոմատոգրաֆի օգնությամբ (աշտարակի չափը՝ 300 × 7,8 մմ, շարժուն ֆազ՝ H₂O, հոսքի արագություն՝ 0.6 մլ/րոպե, ներարկման ծավալ՝ 20 մկլ, աշտարակի ջերմաստիճան՝ 80⁰C, դետեկտորի ջերմաստիճան՝ 55⁰C):

Միկրոջրիմուռի չոր կենսազանգվածի ճարպաթթվային կազմը որոշվել է գազ-բրոմատոգրաֆիական եղանակով (Varian CP-3800 GC՝ բոցային-իոնիզացնող դետեկտորով, ԱՄՆ, մազանոթային խողովակային աշտարակ՝ SupelcoWax-10՝ տրամագիծ՝ 0,32 մմ, երկարություն՝ 30 մ, կրող գազ՝ հելիում, հոսքի հաստատուն արագություն՝ 3,5 մլ/րոպե): Ճարպաթթուների նախնական էթերիֆիկացումն իրականացվել է համաձայն Լեպլեյի և Ռոյի մեթոդի [12]:

Կանաչ կենսազանգվածում բլորոֆիլ *a*-ի և *b*-ի պարունակությունը որոշվել է սպեկտրոֆոտոմետրիկ եղանակով: Կատարվել է բլորոֆիլի էքստրակցիա ագետոնով (99.5%, Sigma-Aldrich): Բոլոր ցենտրիֆուգումներն իրականացվել են Sigma 2-6E, Sartorius, Գերմանիա ցենտրիֆուգի օգնությամբ: Ստացված էքստրակտի մեջ բլորոֆիլ *a*-ի և *b*-ի պարունակությունը որոշվել է սպեկտրոֆոտոմետրիկ չափումների միջոցով, չափվել են ստացված էքստրակտի կլանման արժեքները՝ 645 և 662 նմ ալիքի երկարությունների տակ: Հաշվարկները կատարվել են համաձայն հետևյալ բանաձևերի [9].

$$\begin{aligned} \text{Բլորոֆիլ } a &= 11.75 A_{662} - 2.350 A_{645} \\ \text{Բլորոֆիլ } b &= 18.61 A_{645} - 3.960 A_{662} \end{aligned}$$

Բլորոֆիլի պարունակությունը նմուշում որոշվել է համաձայն հետևյալ բանաձևի.

$$\text{Բլորոֆիլ (մգ/լ)} = \frac{\text{Բլորոֆիլ (մգ/լ)} * \text{Էքստրակտի ծավալ (մլ)}}{\text{Նմուշի չոր զանգված (մգ)}}$$

Չոր կենսազանգվածում բլորոֆիլ *a*-ի և *b*-ի (մգ/գ) պարունակությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.


$$\text{Բլորոֆիլ (մգ/լ)} = \frac{\text{Բլորոֆիլ (մգ/լ)}}{\text{Նմուշի չոր զանգված (գ/լ)}}$$

Արդյունքներ և քննարկում: *P.kessleri* միկրոօրգանիզմի աճը գնահատելու համար ամեն օր վերցվել են նմուշներ սպեկտրոֆոտոմետրիկ չափումների համար:

Աճի գնահատումն իրականացվել է 30 օրվա ընթացքում: Նկ. 1-ում ներկայացված է աճի արագության կորը և օպտիկական խտություն-չոր կենսազանգված հարաբերությունը: Համաձայն ստացված տվյալների, աճի էքսպոնենցիալ փուլն ավարտվել է կուլտիվացման 6-րդ օրը:

$$\mu(\ln N/N_0)/t = (\ln 1.6364/0.1723)/5 = 0.45 \text{ օր}^{-1}$$

Կուլտուրալ հեղուկի pH-ը ևս ամեն օր չափվել է, ելային սննդամիջավայրի pH-ի արժեքը եղել է 8.6, սակայն ինոկուլացումից անմիջապես հետո այն նվազել է մինչև 7.66: Կուլտիվացման ընթացքում pH-ը սկսել է աճել, դա հատկապես նկատելի է աճի էքսպոնենցիալ փուլում: Աճի ստացիոնար փուլում pH-ի արժեքներն էականորեն չեն փոխվել:



Նկ. 1. *P. kessleri* միկրոօրգանիզմի աճի գնահատումը


Ինչպես երևում է օպտիկական խտություն – չոր կենսազանգված հարաբերությունից, անգամ բավականին բարձր օպտիկական խտության դեպքում (6,61) չոր կենսազանգվածի քանակությունը կուլտուրալ հեղուկում մեծ չէ՝ 2,758 գ/լ, ինչը դժվարացնում է չոր կենսազանգվածի ստացումը և դարձնում այն տնտեսապես ոչ շահավետ:

Չոր կենսազանգվածի արդյունավետ ստացման եղանակների որոնումը ներկայումս հանդիսանում է միկրոօրգանիզմների արդյունաբերական կիրառման հիմնական խնդիրներից մեկը: Ելնելով ստացված տվյալներից՝ կատարվել է 1000 և կուլտուրալ հեղուկից չոր կենսազանգվածի ստացման տեսական հաշվարկ: Ցույց է տրվել, որ 1000 և ծավալով կուլտիվացման դեպքում կարելի է ակնկալել շուրջ 2600 գ կենսազանգված:

P. kessleri միկրոօրգանիզմի կենսազանգվածում Կեյլալի եղանակով որոշվել է սպիտակուցների պարունակությունը, այն կազմել է չոր կենսազանգվածի 43,3 %-ը:

Գրականությունից հայտնի է, որ միկրոօրգանիզմները պարունակում են բոլոր անփոխարինելի ամինաթթուները [6]: Սպիտակուցների այսպիսի մեծ քանակությունը թույլ է տալիս կիրառել միկրոօրգանիզմը որպես սննդային հավելում՝ ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների սննդակարգում: Այն կարող է ծառայել որպես սպիտակուցների լրացուցիչ աղբյուր: Վերջին ժամանակներս հատկապես կարևորվում է միկրոօրգանիզմների ընդգրկումը բուսակերների սննդակարգում:

Բարձր արդյունավետության հեղուկային բրոմատոգրաֆիայի եղանակով կառուցվածքային ածխաջրերի և լիզինի պարունակության անալիզը ցույց է տվել Նշված միացությունների 32,0 % պարունակություն *P. kessleri* միկրոօրգանիզմի չոր կենսազանգվածում: Պարզվել է, որ այն պարունակում է 7,37 % գլյուկան, 9,61 % արաբինան, 7,69 % քսիլան և 7,37 % լիզին՝ չոր քաշի հաշվով: Նկ. 2-ում բերված է ածխաջրային խառնուրդում յուրաքանչյուր բաղադրիչի տոկոսային պարունակությունը:




Նկ. 2. *P. kessleri* միկրոօրգանիզմի ածխի գնահատումը

Ածխաջրերի այսպիսի մեծ քանակությունը հնարավորություն է տալիս օգտագործել այս միկրոօրգանիզմը որպես կենսաէթանոլի և կենսազազի հումք՝ հետագա կենսափոխակերպման ճանապարհով:

P. kessleri միկրոօրգանիզմի չոր կենսազանգվածից Լեպեյքի և Ռոյի մեթոդով ստացված ճարպաթթուների մեթիլ էսթերներն անալիզի են ենթարկվել գազ բրոմատոգրաֆիական եղանակով: Վերցվել է *P. kessleri* միկրոօրգանիզմի 100-ական մգ 2 նմուշ: Հաշվարկները ցույց են տվել, որ *P. kessleri* միկրոօրգանիզմի 100 մգ չոր կենսազանգվածը պարունակում է 6,76 մգ ճարպաթթուներ: Նկ. 3-ում ներկայացված է *P. kessleri* միկրոօրգանիզմի նմուշում հագեցած և չհագեցած ճարպաթթուների կազմը:

Ինչպես երևում է ստացված տվյալներից, *P. kessleri* միկրոօրգանիզմը պարունակում է ճարպաթթուների լայն սպեկտր. կարևոր կենսաբանական և բժշկական նշանակություն ունեցող α -լիոլենաթթվից (C18:3) մինչև հագեցած ճարպաթթուներ, որոնք մեծ նշանակություն ունեն կենսադիզելի արտադրության համար, ինչպես նաև այլ չհագեցած ճարպաթթուներ, որոնք կարող են ունենալ ինչպես առանձին կիրառություն, այնպես էլ կարող են հիդրոգենիզացման ճանապարհով վերածվել հագեցած ճարպաթթուների և կիրառվել որպես կենսավառելիք:



Նկ. 3. *P. kessleri* միկրոօրգանիզմի ճարպաթթվային կազմը

P. kessleri միկրոօրգանիզմի հեղուկ կուլտուրայում որոշվել է բլորոֆիլ *a*-ի և բլորոֆիլ *b*-ի պարունակությունը: Զանազան հաշվարկներ կատարելու համար նախ և առաջ ապակե ֆիլտրերի միջոցով վակուում ֆիլտրման եղանակով որոշվել է կուլտուրալ հեղուկում չոր կենսազանգվածի պարունակությունը: Այնուհետև իրականացվել է բլորոֆիլի էքստրակցիա միկրոօրգանիզմի 2-ական մլ նմուշներից: Աղ. 1-ում ներկայացված են միկրոօրգանիզմում բլորոֆիլների պարունակությունները

Աղյուսակ 1. Սպեկտրոֆոտոմետրիկ չափումների արդյունքները

Բլորոֆիլ	Պարունակությունը չոր կենսազանգվածում (մգ/գ)
a	12.71±0.25
b	5.71±0.37

Կուլտիվացման 30-րդ օրն իրականացվել է կենսազանգվածի անջատում կուլտուրալ հեղուկից: 10 և հեղուկ կենսազանգվածը թողնվել է սեյակային պայմաններում 24 ժ, գլանաձև տարայի մեջ: Առաջացել է երկշերտ լուծույթ: Վերևի առավել խիտ շերտը հեռացվել է, իսկ ներքևի ավելի խիտ շերտը ցենտրիֆուգվել է: Անջատված խոնավ կենսազանգվածը չորացվել է լիոֆիլ չորացման եղանակով:

Այսպիսով, 30 օր ժամանակահատվածով կուլտիվացումից հետո *P. kessleri* միկրոօրգանիզմի կենսազանգվածի քիմիական անալիզը ցույց է տվել կենսաբանական կարևոր նշանակություն ունեցող մի շարք նյութերի զգալի պարունակություն, ինչը լայն հնարավորություններ է ստեղծում այս օրգանիզմի հետագա կիրառության համար: Այն կարող է կիրառվել ինչպես ամբողջական տեսքով՝ որպես սննդային հա-

վելում, այնպես էլ որպես առանձին բաղադրիչների աղբյուր: Հատկապես կարևորվում է այս միկրոօրգանիզմի դերը որպես կենսավառելիքի արտադրիչ, քանի որ կենսավառելիքը կարելի է ստանալ ինչպես ամբողջական բջջից, այնպես էլ՝ բարձրարժեք բաղադրիչների էքստրակտումից հետո մնացած մնացորդային կենսազանգվածից: Կենսավառելիքի ստացման համար միկրոօրգանիզմը կարելի է աճեցնել նաև թափոնաջրերի վրա, ինչը կարող է ունենալ ոչ միայն էկոլոգիական նշանակություն, այլ նաև կարող է զգալիորեն նվազեցնել ստացվող կենսավառելիքի ինքնարժեքը:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ №13ՔԵ-043 ծածկագրերով դրամաշնորհի և ԵՄ HORIZON 2020 ծրագրի Մարիա Սկլադովսկայա Կյուրի դրամաշնորհի Phoenix նախագծի (Պայմանագիր №690925-Phoenix, MSCA) միջոցներով: Հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի այլընտրանքային Էներգիայի աղբյուրների լաբորատորիայի վարիչ ան.գ.թ. Վ.Բ. Գոգինյանին գիտական խորհրդատվության համար, ինչպես նաև Պորտուգալիայի Էներգիայի և երկրաբանության ազգային լաբորատորիայի (թ. Լիսաբոն) աշխատակիցներ Լուիս Դուարտեին, Ալբերտո Ռեեսին, Կրիստինա Օլիվեյրային, Պատրիսիա Մոնիզին, Սեու Պենեդուին և Գրասիա Գոմեսին՝ աշխատանքների իրականացմանն աջակցելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Пиневи́ч В.В., Верзи́лин Н.Н., Степа́нова А.М. Некоторые итоги массовой культуры одноклеточных водорослей. "Вестник ЛГУ", в. 2, 15, 1960.
2. Сенько О.В., Гладченко М.А., Лягин И.В., Никольская А.Б., Маслова О.В., Чернова Н.И., Киселева С.В., Коробкова Т.П., Ефременко Е.Н., Варфоломеев С.Д. Трансформация биомассы фототрофных микроорганизмов в метан. Альтернативная энергетика и экология, 108, В. 3. с. 89-94, 2012.
3. Цоглин Л.Н., Пронина Н.А. Биотехнология микроводорослей., М., Научный мир. с. 182, 2012.
4. American Public Health Association. *Standard Methods for the Examination of Water and Wastewater*. 20th ed., Washington, DC, USA, APHA, 1998.
5. Andersen R.A. *Algal Culturing Techniques*. Elsevier Academic Press, 589 pp., 2005.
6. Becker E.W. Microalgae as a source of protein. *Biotechnol. Adv.*, 25, I. 2, p. 207-210, 2007.
7. Chisti Y. Biodiesel from microalgae. *Biotechnol Adv* 25, 294, 2007.
8. Converti A., Casazza A.A., Ortiz E.Y., Perego P., Del Borghi M. Effect of temperature and nitrogen concentration on the growth and lipid content of *Nannochloropsis oculata* and *Chlorella vulgaris* for biodiesel production. *Chem. Eng. Process.* 48, 6, p. 1146-1151, 2009.
9. Costache A.M., Campeanu G. Neata G. Studies concerning the extraction of chlorophyll and total carotenoids from vegetables. *Romanian Biotechnological Letters*, 17, 5, 2012.
10. Guedes A.C., Amaro H.M., Malcata F.X. Microalgae as sources of carotenoids. *Mar. Drugs*. 9, I. 4, p. 625-644, 2011.
11. Halim R., Danquah M. K., Webley P. A. Extraction of oil from microalgae for biodiesel production: A review. *Biotechnol. Adv.*, 30, I. 3, p. 709-732, 2012.
12. Lepage G. and Roy C.C. *Journal of Lipid Res.*, 25, 1391-1396, 1984.
13. Liang Y., Sarkany N., Cui Y. Biomass and lipid productivities of *Chlorella vulgaris* under autotrophic, heterotrophic and mixotrophic growth conditions. *Biotechnol. Lett.*, 31, p. 1043-1049, 2009.
14. López, C.V., Garcia M.C., Fernandez F.G., Bustos C.S., Chist J., Sevilla J.M. Protein measurements of microalgal and cyanobacterial biomass. *BioreSource Technology*, 19, 101, 7587-7591, 2010.
15. Mata T.M., Martins A.A., Caetano N.S. *Microalgae for biodiesel production and other applications: A review*. *Renew. Sust. Energ. Rev.*, 14, I. 1, p. 217-232, 2010.
16. Mayur M. Phukan, Rahul S. Chutia, B.K. Konwar, R. Katakib Microalgae *Chlorella* as a potential bioenergy feedstock. *Appl. Energ.*, 88, I. 10, p. 3307-3312, 2011.
17. Richmond A., Hu Q. *Handbook of microalgal culture: applied phycology and biotechnology*, second edition. Wiley-Blackwell. USA. p.736, 2013.
18. Skjanes K., Rebours C., Lindblad P. *Potential for green microalgae to produce hydrogen, pharmaceuticals and other high value products in a combined process*. *Crit. Rev. Biotechnol.*, 33, I. 2, p. 172-215, 2013.
19. Sluiter A., Hames B., Ruiz R., Scarlata C., Sluiter J., Templeton D., and Crocker D. Determination of Structural Carbohydrates and Lignin in Biomass. Laboratory Analytical Procedure. Issue Date: April 2008 Revision Date: (Version 08-03-2012), August 2012.
20. Spolaore P., Joannis-Cassan C., Duran E., Isambert A. Commercial applications of microalgae. *J. Biosci. Bioeng.*, 101, I. 2, p. 87-96, 2006.
21. Stefanie Van Wyche and Lieve M.L. Laurens. Determination of Total Solids and Ash in Algal . Laboratory Analytical Procedure (LAP), Issue Date: December 2, 2013, Revision Date: December 29, 2015.
22. Tamiya H. Growing *Chlorella* for food and feed. *Proceedings of the World Symposium on Applied Solar Energy*. Stanford Research Institute, Menlo Park, California, pp. 231-41, 1956.
23. Wu Y.H., Hu H.Y., Yu Y., Zhang T.Y., Zhu S.F., Zhuang L.L., Zhang X., Lu Y. *Microalgal species for sustainable biomass/lipid production using wastewater as resource: A review*. *Renew. Sust. Energ. Rev.*, 33, p. 675-688, 2014.

Ստացվել է 29.08.2018



Биол. журн. Армении, 4 (70), 2018

К ЮБИЛЕЮ В. Е. АВЕТИСЯН



5 октября 90 лет назад – в 1928 году – в Ереване родилась Вандика Ервандовна Аветисян.

Будущий ботаник, систематик, монограф семейства крестоцветных начала свой путь в знание в школе № 8 им. А.С. Пушкина, которую окончила в 1946 году и в том же году поступила на биологический факультет Ереванского государственного университета.

По окончании университета в 1951 году Вандика Ервандовна становится аспиранткой Института ботаники АН Армении. Ее научным руководителем был выдающийся ученый Армен Леонович Тахтаджян, который в тот период уже был вынужден покинуть Армению по обвинению в поддержке вейсманистов-морганистов и работал в Ботаническом институте АН СССР им. В.Л. Комарова в г. Ленинграде. В. А. Аветисян была командирована в Ленинград, где уже в марте 1955 г. успешно защитила кандидатскую диссертацию по теме “Кавказские представители рода *Inula* L.”. Позже работа была опубликована в виде монографии.

В том же году она вернулась в Ереван, в Институт ботаники, где проработала более 50 лет в отделе систематики и географии высших растений. В. Е. Аветисян начинала с должности младшего научного сотрудника, в 1960 году стала старшим научным сотрудником, а с 1973 по 1989 годы она руководила этим отделом. В 1989 года Вандика Ервандовна Аветисян была назначена на должность научного руководителя гербария Института ботаники НАН РА, затем – ведущего научного сотрудника института. Годы ее руководства отделом систематики и географии Института были наполнены работой не только над различными таксонами для издания многотомника “Флора Армении”, но и кропотливым изучением огромного семейства крестоцветных, богато представленного во флоре Кавказа. В 1991 году В. Е. Аветисян защитила диссертацию по этой группе: “Кавказские крестоцветные (семейство Brassicaceae)”, получив ученую степень доктора биологических наук. В своей работе В.Е. Аветисян проанализировала не только систематические вопросы этого семейства, но эволюцию, географию, вопросы защиты уязвимых видов крестоцветных. У нее более 150 научных работ, ею отредактированы многие тома “Флоры Армении”.

В. Е. Аветисян – участник многочисленных научных экспедиций как в Армении, так и в других регионах Советского Союза. Эти экспедиции охватили практически все флористически интересные области СССР: Кольский полуостров, высокогорья Тянь-Шаня, Памира, предгорья Копетдага, пустыню Кара-Кум, бассейн озера Иссык-Куль, Прибалтику, Карпаты, Молдову, районы Приморья, Камчатку, Сахалин, острова Шикотан и Кунашир Курильской гряды, озеро Байкал, Уральские горы, горный Алтай.

Кроме научной работы, руководства отделом, В.Е. Аветисян активно участвовала в издательской деятельности. В разные годы она была в составе редакционной коллегии “Биологического журнала Армении”, ботанических журналов “Флора, растительность и растительные ресурсы Армении” и “Тахтаджяния”.

Членство в Ботаническом обществе СССР (член Совета), Армянском Ботаническом обществе, Организации по изучению флоры и растительности Средиземноморья “ОРТИМА” – свидетельство ее международной активности в деле изучения и сохранения богатства растительного мира планеты.

О результатах своей научной работы она докладывала на самых разных уровнях, участвуя в многочисленных союзных и международных ботанических конференциях и конгрессах.

Ее научные заслуги были высоко оценены. В 1975 году В.Е. Аветисян получила бронзовую медаль 12 международного Ботанического конгресса (Ленинград), она удостоена следующих государственных наград: “За доблестный труд” (1970 г.), почетный знак Совета министров СССР “Победитель соцсоревнования” (1974 г.), Почетная грамота Академии наук АрмССР (1979 г.), медаль Верховного Совета СССР “За трудовую доблесть” (1981 г.), медаль Верховного Совета СССР “Ветеран труда” (1984 г.), стипендия “Биоразнообразие” Фонда Дж. Сороса (1993), Почетная грамота НАН РА (2008 г.).

Поздравляем нашу дорогую коллегу с юбилеем и от всего коллектива Института ботаники им. А. Тахтаджяна НАН РА желаем ей крепкого здоровья и успехов.

Главный научный сотрудник Ин-та ботаники им. А. Тахтаджяна НАН РА, д.б.н., проф. Г.Г. Оганезова

Зав. Отд. систематики и географии высших растений Ин-та ботаники им. А. Тахтаджяна НАН РА, д.б.н. М.Э. Оганесян

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ» -ի
Էլեկտրոնային տարբերակը
և հեղինակների համար կանոնները գետեղված են հետևյալ կայքէջում
<http://www.flib.sci.am/eng/Biology/>

Խմբագրության աշխատակիցներ՝
Ափինյան Ն.Հ., Իսահակյան Ժ.Հ., Սարգսյան Է.Գ.
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ. 24 գ, սենյակ 11,
Հեռ. 010 58 01 97; 010 57 21 19, E-mail: bja@ysu.am

Сотрудники редакции:
Апинян Н.А., Исаакян Ж.Г., Саркисян Э.Г.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24 г, комната 11,
Тел. 010 58 01 97; 010 57 21 19, E-mail: bja@ysu.am

Staff of Editorial office:
Apinyan N.H., Isahakyan Zh.H., Sargsyan E.G.
Address of Editorial office: 0019, Yerevan, Marshal Baghramyan pr. 24 g, room 11,
Tel. 010 58 01 97; 010 57 21 19, E-mail: bja@ysu.am

Հրատ. պատվեր՝ 907
Ստորագրված է տպագրության՝ 06.12.2018:
Թուղթը՝ օֆսեթ. № 1:
6,5տպ.մամուլ: Տպաքանակ՝ 150:
ՀՀ ԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան:
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ. 24: